**Ջեյն Մաքբրայդ**
(Հիմնված է իրական պատմության վրա:)

# Մենք միասին կանենք այդ

*Աննին վախենում էր հաճախել Երիտասարդ կանանց միություն:*

*Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:*

Աննին տրորում էր իր զգեստի կտորը: Նա փորձեց լսել խոսողներին: Բայց նրա ստամոքսում նյարդային թրթռոցի զգացում կար:

Այսօր այն օրն է, երբ Աննին սկսելու է գնալ Երիտասարդ Կանանց խումբ: Նա դասարան էր գնալու հաղորդության ժողովի ավարտից անմիջապես հետո: Բոլորն ասում էին Աննիին, որ նա պետք է ոգևորված լինի, բայց փոխարենը նա վախենում էր:

Նա նայեց Թամիին՝ իր մեծ քրոջը: Թամին երեք տարի Երիտասարդ կանանց խմբում էր և սիրում էր այն: Նա միշտ ասում էր Աննիին, թե որքան հիանալի է այն: «Դու այնքան շատ ընկերներ կունենաս»,- ասում էր Թամին: Այն տարբերվում է Երեխաների միությունից: Այն գրեթե նման է մեծահասակների խմբին»:

Բայց Աննին նման չէր իր քրոջը: Թամին սիրում էր նոր մարդկանց և նրա համար հեշտ էր ընկերանալ: Աննին լուռ էր և ավելի շուտ կնախընտրեր կարդալ կամ նկարել, քան խոսել ուրիշների հետ:

Աննին դեմքին ակնե ուներ, և ամաչում էր իր տեսքից: Նա հատուկ կրեմ էր օգտագործել, որն օգնել էր: Բայց մաշկի վրայի կարմիր հետքերը չէին անցնում:

Հաղորդության ժողովից հետո Աննին ոտքը կախ գցեց միջանցքում: «Ես չեմ կարող գնալ Երիտասարդ կանանց խումբ այսօր»,- ասաց նա մայրիկին ու Թամիին:

Մայրիկն անհանգստացած տեսք ուներ: «Ես կարծում էի՝ դու ոգևորված էիր Երիտասարդ կանանց մոտ տեղափոխվելու համար: Ի՞նչ պատահեց»:

«Ես չգիտեմ որևէ մեկին այդ չափահաս աղջիկներից»: Աննին հպվեց իր դեմքին: «Եվ նրանք հավանաբար կծիծաղեն, երբ տեսնեն ինձ»:

Մայրիկը գրկեց Աննիին: «Հիշիր, որ Թամին էլ է այնտեղ լինելու»:

«Ես նման չեմ Թամիին»,- պատասխանեց Աննին: Նա նայեց իր քրոջը: «Քեզ մոտ լավ է ստացվում մարդկանց հետ խոսելը»:

«Ես գիտեմ, որ դժվար է գնալ նոր դասարան», - ասաց Թամին: Բայց մենք միասին կանենք այդ: Ես էլ էի վախեցած, երբ սկսեցի Երիտասարդ Կանանց խումբ հաճախել:

Աննին լայն բացված աչքերը հառեց Թամիի վրա: Թամին միշտ այնքան քաջ էր թվում: Նա նույնիսկ փորձարկման էր գնացել իր դպրոցական մյուզիքլի համար և ստացել էր գլխավոր դերը: Աննին այդպիսի բաներ չէր անում: Նա ուղղակի փորձում էր աննկատ մնալ:

«Բայց դու երբեք չես վախենում», - ասաց նա:

Թամին ժպտաց: «Իհարկե, ես էլ եմ վախ զգում: Ես վախ էի զգում, երբ փորձարկման գնացի մյուզիքլի համար: Գիտե՞ս, ինչ արեցի»:

Աննին շարժեց գլուխը:

«Ես աղոթեցի և արեցի այն ամենը, ինչ կարող էի: Ես նաև օգնում էի մյուս երեխաներին: Թվում էր, որ նրանցից շատերը ևս վախենում էին՝ ճիշտ ինչպես ես: Երբ օգնեցի ուրիշներին քաջ լինել, և դա օգնեց *ինձ* նույնպես քաջ լինել»:

Աննին մտածեց այդ մասին: Արդյոք կարո՞ղ էր ինքն անել այն, ինչ Թամին էր արել, և օգնել իր դասարանի մյուս աղջիկներին չվախենալ:

«Կարծում ես, կարո՞ղ ես այսօր գնալ Երիտասարդ կանանց խումբ»,- հարցրեց մայրիկը:

Աննին խոր շունչ քաշեց: Ապա գլխով արեց: Նա կարողացավ անել դա:

Աննին և Թամին քայլեցին դեպի Երիտասարդ կանանց դասարան: Աննին նայեց մյուս աղջիկներին: Նրանցից մի քանիսը նյարդայնացած էին երևում: Ջուլիան մազերի մի փունջ էր ոլորում իր մատի շուրջը, մինչդեռ Էրիկան կրծում էր եղունգները:

Աննին մտածեց, թե ինչպես կարող էր օգնել: Նա գնաց և նստեց Ջուլիի կողքին: «Դո՞ւ էլ ես նյարդայնացած»,- շշնջաց Աննին: «Լավ կլինի»:

Ջուլին ժպտաց, և Աննին ժպտաց ի պատասխան: Այժմ Աննին ավելի քիչ էր վախ զգում: Միգուցե Երիտասարդ կանանց խմբում լինելը իսկապես կարող էր հրաշալի լինել: ●

ՆԱԿԱՐՆԵՐԸ՝ ՋՈԷԼ ԼԱՆԴՈՒՆՈՒՐ